ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՄԱՀԸ

Սույն թվականի հունիսի 3-ին Երևանում վախճանվեց Մայր Աթոռի հարազատ զավակ և հայ եկեղեցու միության և միասնականության ջերմ պաշտպան Հովհաննես Մանուկի Բարսեղյանը:

Հունիսի 8-ին, կիրակի օրը, Մայր տաճարում հանգուցյալի հիշատակին կատարվեց հոգեհանգիստ՝ Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո:

Հովհ. Բարսեղյանը ծնվել է 1897 թվականին Իգդիր քաղաքում: Դեռևս վաղ մանկության տարիներին զրկվել է հորից և ճաշակել որբության ու զրկանքի դառնությունը: Պատանեկան տարիներին հորեղբոր օգնությամբ մեկնել է Մոսկվա՝ այն ժամանակվա համար հազվագյուտ մի մասնագիտություն՝ մեքենագիտություն սովորելու: Ուսումն ավարտելուց հետո ապրում և գործում է Պարսկաստանում: Նա առաջիններից եղավ, որ ջերմորեն ողջունեց իր հայրենիքի ազատությունն ու անկախությունը և հարազատորեն ընդունվեց վերածնված հայրենիքի և ժողովրդի պաշտպանության գործին:

Հանգուցյալը հայրենասիրական մեծ գործունեություն է ծավալում Պարսկաստանում. 1937 թվականին իր միջոցներով Ղազվին քաղաքում կառուցում է մի եկեղեցի, որը մինչև այժմ էլ գործում է:

Նա երկար ժամանակ եղել է ՀՕԿ-ի Ահվազի մասնաճյուղի նախագահ և հսկայական գումարներ է հավաքել ու փոխանցել մայր հայրենիք: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Հ. Բարսեղյանը ամբողջ հոգով նվիրվել է հայրենիքին օգնելու մեծ ու շնորհակալ գործին: Նա եղել է Պարսկաստանում կազմակերպված «Հովհաննես Բաղրամյան» տանկային շարասյան, «Պատերազմից տուժած որբ ու անապաստան երեխաների օգնության» և «Հայաստանի մանկատներին օգնող» ֆոնդերի ու կազմակերպությունների անդամ և պատասխանատու գանձապահ: Բարսեղյանը եղել է նաև այն մասնախմբի անդամը, որը ոսկե սուր է նվիրել մարշալ Հովհաննես Բաղրամյանին:

Եվ, ի վերջո, հանգուցյալը եղել է հայրենադարձության հանձնաժողովի ակտիվ մասնակիցներից մեկը և գլխավորել է Պարսկաստանից 1946 թ. հայրենիք վերադարձող առաջին և ամենամեծ քարավանը:

Հանգուցյալը իր հայրենասիրության և եկեղեցաշինության մեծ գործունեության համար արժանացել է լուսահոգի Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի և Վազգեն Ա Հայոց Հայրապետի բարձր գնահատանքին՝ սրբատառ կոնդակների և ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ականակուռ շքանշանի: Նա արժանացել է նաև պետական պարգևի՝ «Աշխատանքային արիության» մեդալի՝ իր հայրենասիրական և հասարակական անձնուրաց աշխատանքների համար:

Հ. Բարսեղյանը եղել է Մայր Աթոռ ս. Էջմիածնի հավատարիմ զավակ և մինչև իր կյանքի վերջը աշխատել է բարձր պահել հայ եկեղեցու դարավոր կենտրոն ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության առաքելատուր հեղինակությունն ու հմայքը:

Թող միշտ օրհնված լինի նրա հիշատակը:
Հանգիստ իր ոսկորներին: